խցկում է բերանը, երկրորդը ականջները, իսկ երրորդն էլ աչքերը, այսինքն նրանք ուզում են մնալ համր, խուլ ու կոյր դէպի շրջապատող աշխարհը: Ուրիշ խօսքով, բուդդհիզմի բնորոշ գիծն է երկրայինից խուսափելը եւ կեանքն արհամարհելը:

Բարեբաղդաբար ճապոնացին բնականից խիստ կենս-ուրախ է եւ երբէք չէ կարողացել այդ՝ կեանք սառեցնող յոռետեսութեանը ամբողջովին ենթարկւել: Ճապոնացու պէս հեշտ մահւան դէմ գնացող չկայ. բայց միեւնոյն ժամանակ ոչ ոք այնպէս ուրախ սրտով չի փարում կեանքին, ինչպէս ճապոնացին, նոյն իսկ կեանքի բոլոր զրկանքների ժամանակ: Այս բանի մէջ նրան շատ է օգնում այն հաւատը, թէ նրա բաժին ընկած բոլոր դժբաղդութիւնները հետեւանք են իր նախորդ կեանքի մէջ գործած մեղքերի: Եւ եթէ իր կեանքի այս ձեւափոխութեան մէջ քաւի իր մեղքը, իր հոգու յաջորդ ձեւափոխութիւնները աւելի երջանիկ կը լինեն:

Այսպիսով ճապոնացին առնում է բուդդհիզմից այն, ինչ որ ուրախութիւն եւ ոյժ է տալիս կեանքին, բաց թողնում նրա յոռետեսութիւնը:

Այս տեսակէտից խիստ յուզիչ ու բնորոշ է ճապոն սիրահարների հոգեբանութիւնը: Եթէ չեն յաջողում ամուսնանալու, նրանք մեղադրում են ոչ թէ իրանց ծնողներին ու հանգամանքները, այլ միայն իրանց, որ նախորդ կեանքում երեւի խանգարած են եղել ամուսնական սրբութիւնը, կամ մի որեւէ այլ կերպ մեղանչել են իրար դէմ: Այլ եւ հաւատում են, որ միասին մեռնելուց յետոյ նրանք վերածնւելու են մի այլ աւելի երջանիկ կեանքում, ուր կը միանան իրար հետ: Եւ մեռնելիս թողնում են սովորաբար յայտնի ձեւ ունեցող մի նամակ, ուր խնդրում են իրանց թաղել միասին: Եւ այս թաղումը կատարւում է ընդհանրապէս մեծ շուքով: